ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2023 թվական N 166 - Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 2-ի «Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» N 198-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Մասնակի սուբսիդավորման ենթակա է ձեռքբերվելիք տոհմային կենդանու արժեքի 50 տոկոսը, բայց ոչ ավել, քան՝

ա. տոհմային ցուլի 1 կգ կենդանի քաշի դիմաց՝ 1000 ՀՀ դրամ,

բ. տոհմային կովի (3-5 ամսական հղի) 1 կգ կենդանի քաշի դիմաց՝ 750 ՀՀ դրամ,

գ. արու և էգ հորթի (1-5 ամսական) 1 կգ կենդանի քաշի դիմաց՝ 1500 ՀՀ դրամ,

դ. արու և էգ մատղաշի (5-15 ամսական) 1 կգ կենդանի քաշի դիմաց՝ 1000 ՀՀ դրամ,

ե. երինջի (3-5 ամսական հղի) 1 կգ կենդանի քաշի դիմաց՝ 1000 ՀՀ դրամ.

2) 8-րդ կետի 1-ին ենթակետում «երեք» բառը փոխարինել «երկու» բառով.

3) 12-րդ կետի 1-ին ենթակետում «8-րդ կետից» բառերը փոխարինել «7-րդ և 8-րդ կետերից» բառերով.

4) Ձև N 2-ում «24» թիվը փոխարինել «15» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***